ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# Ավարտական հետազոտական աշխատանք

Թեման- Գեղագիտական ճաշակի ձևավորման և զարգացման կարևորությունը երաժշտության դասին

Մասնակից՝ Կարմեն Պողոսյան

Դպրոց՝ Հովտաշատի միջն. դպրոց

Վերապատրաստող՝ Անահիտ Կոշկարյան

Վաղարշապատ 2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

Գլուխ 1 Գեղագիտական դաստիարակության էությունն ու իրականացմանառանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում----------5

Գլուխ 2. <<Երաժշտություն>> դասընթացի հնարավորությունները կրտսեր դպրոցականների գեղագիության դաստիարակության գործում----------6

Գլուխ 3. Գեղագիտական դաստիարակության իրականացումն ուսումնական ու արտաուսումնական գործընթացում / դասի արտադասարանային միջոցառման նկարագրություն ու վերլուծություն/----------8

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------11

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------12

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Աշխատանքի արդիականությունը** Հայաստանի Հանրապետությունում արդի սոցիալ-տնտեսական, քաղաքական, գիտատեխնիկական զարգացումները նոր խնդիրներ են առաջադրում կրթական համակարգի առջև: Այն նպատակաուղղված է մարդկանց կողմից մշակութային, հոգևոր ժառանգությանը, գիտելիքները և փորձը խորապես յուրացնելուն, պահպանելուն, հարստացնելուն և գալիք սերունդներին ի պահ տալուն: Հանրակրթական դպրոցի համար կարևորագույն խնդիր է անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումը, որտեղ առանձնանում և ընդգծվում է աշակերտների գեղագիտական դաստիարակությունը: Այն պետք է իրականացնել ոչ միայն հումանիտար առարկաների միջոցով, այլ նաև՝ բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում: Այժմ մեզ նման փոքր երկրների համար գեղագիտական արժեքները ազգային ավանդույթներին կապելը առաջնային խնդիր է ու գլոբալիզացիայի գերակա մարտահրավերներից մեկը:

Իրավացի է Կ.Դ. Ուշինսկին, երբ գրում է. «Ամեն մի գիտության մեջ քիչ թե շատ կա գեղագիտական տարր, որի հաղորդումն աշակերտներին պետք է ի նկատի ունենա դաստիարակը»[1]: Արվեստի յուրաքանչյուր ճյուղին վերաբերող առարկա հանրակրթական դպրոցում իր վրա է վերցնում գեղագիտական դաստիարակության սերմանման ռոբոտացման դարաշրջանի համար ավելին քան բարդ գործը: Ինչն էլ պայմանավորում է աշխատանքի արդիականությունը:

***Աշխատանքի նպատակն ու խնդիրները***: Աշխատանքի նպատակն է գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում երաժշտություն առարկայի շրջանակներում:

Հիմնական խնդիրները, որ վեր ենք հանել ուսումնասիրության ընթացքում

- Ուսումնասիրել գեղագիտական դաստիարակության էությունը,
- Ներկայացնել երաժշտություն առարկայի դերը այդ ասպարեզում,

[1] Ушинский К.Д., Материалы к третьему тому "Педагогической антропологии", Собр.соч, т.10, М., 1980, с.609.

- Քննել այն հիմնական մեթոդները որ պետք է գործի դնի ուսուցիչը դասապրոցեսի ժամանակ իր առջև դրված գեղագիտական դաստիարակության խնդիրները իրագործելու համար:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, բուն վերլուծական մասից, որը ներառում է երեք գլուխ և եզրակացություններից:

## 1 Գեղագիտական դաստիարակության էությունն ու իրականացմանառանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում

«Գեղագիտական անհատականության մշակույթի» հայեցակարգի էությունը պարզաբանելիս Վերբան այն մեկնաբանում է որպես անձի հիմնական գեղագիտական որակը, որպես անհատական արժանիք, ինչը թույլ է տալիս նրան լիովին հասկանալ, շփվել կյանքում գեղեցիկի հետ և ակտիվորեն մասնակցել դրա ստեղծմանը:

Գեղագիտական հետաքրքրությունը սահմանվում է որպես մարդու մտավոր պրոցեսների սելեկտիվ կողմնորոշում իրականության օբյեկտների և երևույթների նկատմամբ, այնպիսի գործողություններ կատարելու ցանկություն, որոնք բերում են բավարարվածություն (ուսումնառության գործընթացի ուրախությունը, հետաքրքրության առարկայի ճանաչման խորացման սատարելու ցանկություն, ճանաչողական գործունեություն, ձախողումներ զգալու և դրանց հաղթահարման կամային ձգտումներ): Գեղագիտական հետաքրքրությունը հուզական, կամային, մտքային գործընթացների միասնությունն է, որում անպայման առկա է ճանաչողական սկզբունք, քանի որ, առարկայից հետաքրքրվելով, մարդը ձգտում է դա ավելի լավ իմանալ:

Առաջին դասարանցի, ով ընդունվել է ուսումնական հաստատություն, բոլորովին նոր տեղ է գրավում մարդկանց փոխհարաբերությունների համակարգում՝ նա նոր պարտականություններ ունի՝ կապված կրթական գործունեության հետ: Նրա մոտ, հոգեկանի զարգացմանը համահունչ ծնվում են մտավոր նորագոյացություններ, որոնք բնութագրում և կարևորում են արժեքները և կրտսեր աշակերտների զարգացման գործում հանդիսանում են այն հիմքը, որն ապահովում է տվյալ տարքային սահմանում անհատի զարգացումը: Ավելին, նրա մտքում դրվում են կոնկրետ բարոյական, վարքային չափանիշներ, նա սկսում է ընկալել դրանց նշանակությունն ու անհրաժեշտությունը: Ուստի անհատականության զարգացումն ու գեղագիտական ճաշակի ձևավորումը արդյունավետ կազմակերպելու կարևորագույն շրջան է և կախված է մեծահասակի խնամքից ու գիտակից մոտեցումից:

Գեղագիտական մշակույթի ձևավորումը մարդու արվեստի և իրականության մեջ գեղեցիկ ընկալման և ճիշտ ընկալման կարողության նպատակային զարգացման գործընթաց է: Այս գործընթացը սկսվում է մարդ անհատի ձևավորման պահից, դեռ սաղմանային կյանքում: Հետևաբար պետք է փաստենք, որ գեղագիտական դաստիարակության գործում անասելի մեծ է ընտանիքի դերը:

Դեռ վաղ մանկական հասակում ծնողները պետք է երեխայի մեջ ներդնեն սեր գեղեցիկի նկատմամբ սովորեցնեն նրան նկատել ու գնահատել բնության յուքանչյուր մասնիկի, ծառ ու թփի շարժումը, լսել թռչունների երգը, հետևել ծանոթ կենդանու շարժին: Միայն նման կերպ է հնարավոր դաստիարակել ինքնաբավ, ազատ ու երջանիկ անհատ, ով ունակ է երջանկանալու ու երջանկացնելու:

Ինչ վերաբերում է տարրական դպրոցի աշակերտին, ապա նրա համար «Ուսուցիչն ամենակարևոր մարդն է: Նրանց համար ամեն ինչ սկսվում և ավարտվում է ուսուցչի խոսքերից: Դրա միջոցով կրտսեր աշակերտները սովորում են աշխարհը, սոցիալական վարքագծի համընդհանուր ճանաչված չափանիշները, քանի որ ուսուցչի հայացքները, ճաշակը, նախասիրությունները դառնում են նրանց անձնականը[2]:

Տարրական դպրոցական տարիքի համար՝ գեղագիտական ստանդարտներին ծանոթությունը տեղի է ունենում մանկական գեղարվեստական, անիմացիոն ֆիլմերի, գրքերի կամ մուլտֆիլմերի հերոսների միջոցով, լինեն դրանք մարդիկ, կենդանիներ, թե մարդկային հատկություններով օժտված հորինված արարածներ, որ համարվում են բարու և չարի, ողորմության և անողոքության, հավատարմության և խաբեության կրողներ: Իր գիտակցության չափով կրտսեր աշակերտը դառնում է բարու կողմնակից, համակրում է հերոսներին՝ չարի դեմ տարվող պայքարում:

[2] ОСОБЕННОСТИ ЭСТЕТИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ В МЛАДШЕМ ШКОЛЬНОМ ВОЗРАСТЕ, https://cyberleninka.ru/article/n/osobennosti-esteticheskogo-vospitaniya-v-mladshem-shkolnom-vozraste/viewer, 13.09.22:

Բնության, շրջապատի մարդկանց, իրերի գեղեցկության զգացումը կրտսեր դպրոցականի մոտ ստեղծում է հատուկ հուզական և հոգեկան վիճակներ, կյանքի նկատմամբ կոնկրետ ուշադրություն է առաջացնում, սրում հետաքրքրասիրությունը, մտածողությունը, հիշողությունը: Զգայական ուժեղ բռնկումները երկար ժամանակ պահվում են հիշողության մեջ, հաճախ վերածվում են վարքի դրդապատճառների և պարզեցնում համոզմունքների ձևավորման գործընթացը, վարքը և սովորությունները: Նախադպրոցական և վաղ դպրոցական տարիքը կյանքի այն շրջանն է, որի ընթացքում տեղի է ունենում երեխայի զգայական փորձի հսկայական աճ ու կարգավորում, ընկալման ու մտածողության բուն մարդկային ձևերի տիրապետում և երևակայության բուռն զարգացում, կամածին ուշադրության և իմաստալից մտապահման տարրերի ձևավորում[3]: Ուստի կրտսեր սովորողները համարվում են գեղագիտական դաստիարակության արդյունավետ օբյեկտ:

Ընկալման զարգացումը, որ այս տարիքում երեխայի ամենակարևոր հմտությունն է, առանձնապես արդյունավետ կերպով է ընթանում զգայականության հատուկ կազմակերպված դաստիարակության պայմաններում: Նկարել սովորեցնելիս, երաժշտության դասերին, ուսուցողական խաղերի ժամանակ նախադպրոցականները պլանավորված ձևով ծանոթանում են զգայական էտալոնների հետ, սովորում են հետազոտել առարկաները, և դրանք համեմատել յուրացված էտլոնների հետ: Այս ամենի շնորհիվ երեխայի ընկալումները դառնում են լրիվ, ճշգրիտ ու տարբերակված:

Ընկալման զարգացման հատուկ կողմ է գեղարվեստական ստեղծագործությունների գեղագիտական ընկալման ձևավորումը: Նկարը ճիշտ ընկալելու համար երեխան պետք է կարողանա հաշվի առնել նրա առանձնահատկությունները: Պատկերները ճիշտ ընկալելու և, բացի նշված առարկաները թվարկելուց, բովանդակությունը հասկանալու ունակությունը ձևավորվում է նախադպրոցական տարիքում՝ մեծերի ղեկավարությամբ զանազան

[3] Պետրովսկի Ա. Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ե., 1977, էջ 67-68:

նկարներ դիտելու շնորհիվ: Նկարը զննելը և հասկանալը նախադրյալ է հանդիսանում գեղագիտական ապրումների առաջացման համար: Այդպիսի ապրումները առաջին հերթին առաջանում են գույների ու դրանց զուգորդությունների, իսկ ավելի ուշ նաև նկարի ռիթմի և կառուցվածքային առանձնահատկությունների նկատմամբ[4]:

Գեղագիտական կրթությունը հիմնարար է կրտսեր աշակերտի անհատականության հետագա լիարժեք ձևավորման համար, այն կոչված է զարգացնելու գեղարվեստական ճաշակը, զինում է մարդուն, ներդաշնակեցնում, զարգացնում կարողություն հասկանալու, ճիշտ գնահատելու և արժևորելու գեղեցիկն ու արժեքավորը կյանքում և արվեստում: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի՝ գեղեցիկը տեսնելու և արժևորելու հմտությունների զարգացմանը և ի վերջո գեղեցիկ միջավայրում ապրելու պահանջմունքի ձևավորմանն ու զարգացմանը:

Ամփոփելով նշենք, որ գեղագիտական դաստիարակության էությունը սոսկ փիլիսոփայական տրակտատների ու թևավոր խոսքերի մեջ չէ: Այն իրականում ավելի խորքային ըմբռնում ունի ու հնարավորություն է տալիս դաստիարակել բնության հետ ներդաշնակ ապրող, լիարժեք ու ինքնաբավ պատանի, ով էլ առողջ հասարակության հիմքն է:

[4] Նույն տեղում, էջ 70:

## 2. <<Երաժշտություն>> դասընթացի հնարավորությունները կրտսեր դպրոցականների գեղագիության դաստիարակության գործում

Արվեստի բոլոր տեսակները՝ երաժշտությունը, նկարչությունը, քանդակագործությունը, ճարտարապետությունը, թատրոնը, կինոն, լուսանկարչությունը և այլն, իրենց խորը կնիքն են դնում մարդու անհատականության և հոգևոր արժեքների ձևավորման վրա[5]: Արվեստը մարդուն օգնում է հատկապես ինքնադաստիարակության գործում, որն անհնար է առանց մարդու բազմակողմանի և ճիշտ ինքնադիտողունակության: Արվեստը գեղագիտական հաճույքի մեծագույն աղբյուր է: Այն արդարացիորեն անվանում են «զգայելու գիտություն», որն ի զորու է սովորեցնել զգալ, շարժել մարդու զգայական աշխարհը: Սակայն սա պիտի չլինի ինքնանպատակ, այլ կրթելու, դաստիարակելու միտում ունենա[6]:

Կերպարվեստը և երաժշտությունը մարդու հոգևոր աշխարհի կերտման միջոց են դառնում դեռևս վաղ մանկուց: Երեխան այս ասպարեզում իր առաջին քայլերն անում է դեռևս նախադպրոցական տարիքում: Երաժշտությունը հնագույն շրջանից եղել է հոգևոր դաստիարակության ամենակարևոր բաղադրիչը: Դեռևս անտիկ Հունաստանում այն համարվում էր երիտասարդ սերնդի հոգևոր զարգացումն ապահովող առաջնային գործոն և իր նշանակությունը չի կորցրել առ այսօր: Երաժշտական դաստիարակության դասաժամերը զարգացնում են սովորողների երաժշտական լսողությունը, հիշողությունն ու ճաշակը, տալիս համապատասխան գիտելիքներ, ծանոթացնում երաժշտական ուղղություններին և ժանրերին[7]:

Մեծ է երաժշտության դաստիարակչական ու ճանաչողական նշանակությունը սովորողների աշխարհայացքային և արժեքային կողմնորոշումների ձևավորման գործում: Երաժշտությունը պարունակում է

---

[5] Гончаров И. Ф. Действительность и искусство в эстетическом воспитании школьников, М., 1978, с. 17.

[6] Ուշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, Ե., 1959, էջ 38:

[7] Ռուխկյան Վ. Ռ., Արվեստ-մարդ հաղորդակցման գեղարվեստամանկավարժական պայմանները, Ե., 2005, էջ 64:

հսկայական կրթադաստիարակչական ներուժ՝ միջառարկայական կապեր ստեղծելով արվեստների և ֆիզիկական դաստիարակության, հումանիտար և բնագիտական առարկաների միջև: Երաժշտությունը, մյուս առարկաներին հուզազգացմունքային լիցք հաղորդելով, նպաստում է սովորողների կարողությունների ակտիվացմանը, մտավոր և հոգևոր ներուժի բացահայտմանը և զարգացմանը:

Երաժշտական դաստիարակությունը գեղագիտական դաստիարակության բաղադրամասն է, որը նպաստում է երաժշտական ճաշակի զարգացմանը, մշակույթի այդ բնագավառի նկատմամբ հետաքրքրության ու սիրո առաջացմանը, զգացմունքային դաստիարակությանը:

<<Երաժշտություն>> առարկան հանրակրթական դպրոցում դիտվում է որպես արվեստի դասավանդման միջոց, որի հիմքում ազգային և համամարդկային երաժշտությունն է: Այն կրթության և դաստիարակության բնագավառի կարևոր բաղադրամասերից մեկն է, առանց որի թերի կլինի ժամանակակից մարդու մտավոր և հոգևոր զարգացումը:

Երաժշտությունը արվեստի առավել վառ ու հուզական ձևերից մեկն է: Այն արդյունավետ և գործուն միջոց է երեխաների դաստիարակության գործում: Երաժշտությունն օգնում է լիարժեք բացահայտել երեխաների ընդունակությունները, զարգացնել երաժշտական լսողությունն ու ռիթմի զգացողությունը, սովորեցնել ճիշտ ընկալել կերպարների երաժշտական լեզուն: Գեղեցկության ընկալումից և ճանաչումից է սկսվում հուզական մշակույթի և զգացմունքների դաստիարակությունը: Հուզական մշակույթն էլ իր հերթին խթանում է մտքի աշխատանքը, ստիպում խորհել բարոյական այս կամ այն չափանիշի իմաստի վերաբերյալ:

Երաժշտական դաստիարակությունը նպաստում է ոչ միայն անհատի ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանն ու դրսևորմանը, այլև անցյալի գեղարվեստական փորձի, ազգային ու համամարդկային մշակութային արժեքների յուրացմանն ու հաջորդ սերնդին փոխանցմանը:

Երաժշտությունը սովորողների մեջ արմատավորում է մարդկային լավագույն հատկանիշներ, մարդասիրական զգացումներ, բարոյահոգեբանական նկարագիր, գեղագիտական աշխարհայացք, ազգային արժանապատվության խորը գիտակցում և հայրենասիրություն:

Երեխաների երաժշտական զարգացումը, դաստիարակությունը խիստ կապի մեջ են նրանց տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների հետ: Հաշվի առնելով երեխաների՝ երաժշտության ընկալման ակտիվությունը և հետաքրքրությունների լայն շրջանակը, անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել տարրական դասարանցիների երաժշտական դաստիարակության վրա:

Երաժշտությունը արվեստի առավել վառ ու հուզական ձևերից մեկն է: Այն արդյունավետ և գործուն միջոց է երեխաների գեղագիտական դաստիարակության գործում: Երաժշտությունն օգնում է լիարժեք բացահայտել երեխաների ընդունակությունները, զարգացնել երաժշտական լսողությունն ու ռիթմի զգացողությունը, սովորեցնել ճիշտ ընկալել կերպարների երաժշտական լեզուն: Գեղեցկության ընկալումից և ճանաչումից է սկսվում հուզական մշակույթի և զգացմունքների դաստիարակությունը: Հուզական մշակույթն էլ իր հերթին խթանում է մտքի աշխատանքը, ստիպում խորհել բարոյական այս կամ այն չափանիշի իմաստի վերաբերյալ:

Հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում է դրվում աշակերտների երաժշտական դաստիարակության հիմքը: Այդ դասարաններում են ձևավորվում և զարգանում սովորողների երաժշտական ընդունակությունները, կարողությունները, հմտությունները և արժեքային համակարգը, ինչպես նաև երաժշտական արվեստի և կյանքի նկատմամբ սովորողների զգայական, գեղագիտական և ճանաչողական վերաբերմունքը:

Հանրակրթական դպրոցի սովորողների՝ երաժշտության ուսուցման և դաստիարակության աշխատանքներում շեշտը դրվում է դաստիարակչական կողմի, երաժշտության հուզական և ակտիվ ընկալման վրա:

<<Երաժշտություն>> առարկայի ուսումնական հիմնական նպատակն է Դաստիարակել հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված մարդ, երաժշտության գիտակից և ակտիվ ունկնդիր:

Ինչպես նշել է Դ. Բ. Կաբալևսկին «Մասսայական երաժշտական դաստիարակության գլխավոր խնդիրը ոչ այնքան երաժշտության ուսուցումն է, որքան երաժշտության միջոցով երեխաների հոգեկան աշխարհի, նրանց բարոյական նկարագրի վրա ներգործելը»[8]: Երեխաների երաժշտական դաստիարակությունը պետք է սկսել ընտանիքում՝ վաղ տարիքից: Հունգարացի կոմպոզիտոր – մանկավարժ Զ.Կոդային նշել է, որ երեխայի երաժշտական դաստիարակությունը սկսվում է ծնվելուց 9 ամիս առաջ:

Ուստի տարրական դասարաններում հատկապես ընտրված նյութը պետք է լինի գեղարվեստորեն բարձրարժեք, հետաքրքիր, մանկավարժական որոշակի նպատակաուղղվածությամբ, համապատասխանի աշակերտի տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկություններին, հետաքրքրություններին, կատարողական հնարավորություններին:

[8] Երեխաների երաժշտական դաստիարակությունը ընտանիքում, http://chekhov.am/html/mankavarjner/tarakan/nikoyan/erekhaneri%20erajshtakan%20dastiarakutyun.pdf, հասանելի է:

**3. Գեղագիտական դաստիարակության իրականացումն ուսումնական ու արտաուսումնական գործընթացում / դասի արտադասարանային միջոցառման նկարագրություն ու վերլուծություն/**

Երաժշտական ստեղծագործություններն արտահայտում են աշակերտներին շրջապատող կյանքն իր բազմերանգ գույներով, երևույթներով ու դեպքերով, որոնք երեխաների մեջ առաջ են բերում համապատասխան զգացմունքներ, հույզեր, տրամադրություններ ու տպավորություններ և զարգացնում սովորողների երաժշտական կարողությունները, հմտությունները, տալիս որոշակի գիտելիքներ:

Խաղը, մասնավորապես, շարժախաղերը կարևոր դեր են կատարում կրտսեր դպրոցականների շարժումային գործունեության զարգացման համար: Շարժախաղերի օգտակարությունն այն է, որ իրենց մեջ հիմնականում ընդգրկում են երեխայի բնական շարժումների բոլոր տեսակները՝ քայլ, վազք, թռիչք, մագլցում, նետում, վարժություններ որևէ առարկաներով: Շարժախաղերի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հարուստ ու բազմատեսակ շարժումները լայն հնարավորություն են տալիս երեխաներին ցուցադրել ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում: Մանկավարժը պետք է կարողանա օգտվել խաղի այդ առանձնահատկությունից և երեխաների մեջ հետաքրքրության զգացում առաջ բերի շարժման և պարի հանդեպ:

Մանկական նվագարաններով նվագելը երեխաների երաժշտական զարգացման արդյունավետ միջոցներից մեկն է: Այն օգնում է երգացանկի դյուրին յուրացմանը, երաժշտական ընդունակությունների և կատարողական հմտությունների ակտիվ զարգացմանը:

Երեխաներին պետք է ծանոթացնել <<բնական նվագարաններին>> ՝ ձեռքերի և ոտքերի օգնությամբ կատարվող հարվածներին՝ ծափ, դոփյուն, մատների ճտոց, թեթև հարված սեղանին և այլն:

Ծանոթացնել մանկական հարվածային նվագարաններին և նվագելու ձևերին. թմբուկ, զանգակներով դափ, դհոլ, եռանկյունի, ծնծղա, կաստանետ,

մարակաս, ռումբա, փայտիկներ, մանկական չխկչխկան խաղալիքներ, մեղեդային նվագարաններին՝ մետաղաֆոն /զանգակներ/, քսիլոֆոն, շվի:

Արտադասարանական միջոցառումները այն կարևոր ազդակներն են, որոնք նպաստում են աշակերտների ազատ, անկաշկանդ կամարտահայտմանը: Երաժշտության ուսուցչի առջև դրվածգեղագիտական արժեքների ներդրման խնդիրը արտադասարանական միջոցառումներով իրագործելը կարծում ենք լավագուն հնարավորություններ են ընձեռում:

Աշակերտների համար արտադասարանական միջոցառումները լինելու են ցանկալի և սպասված: Համաձայն ենք մանկավարժ Մ. Մանուկյանի այն դիտարկմանը, որ ,դպրոցը ինչպես հարկն է հոգ չի տանում աշակերտների ապագա քաղաքացիական կերպարի ձևավորման մասին[9]:

Տարրական դասարաններում հատկապես անգերազանցելի է արտադասարականակն պարապմունքների դերը, որ երեխային հնարավորություն են ընձեռում դուրս գալ կաղապարներից, ձուլվել բնական միջավայրին ու ազատություն տալ զգացմունքներին:

Փորձենք ներկայացնել Կոմիտասի կաքավիկ երգի ուսուցման արտադասարական միջոցառման նկարագրություն:

Անհրաժեշտ պարագաներ.

- Երաժշտական նվագարկիչ
- Բնություն

Նախատեսվում է նախօրոք գտնել բովանդակության հետ կապված հեքիաթ, բանաստեղծություն, պատմություն և այլն, կապել երգի հետ, ստեղծել փոքրիկ թատերական ներկայացում, որտեղ երգն ու բանահյուսությունը միասին կներկայացվեն

Նախատաեսվում է նախ մաքուր կատարել երգը, ծափերով ու դոփյուններով ըմբռնել ռիթմը, տակտը, ձևավորել մտերմիկ միջավայր, մի քանի անգամ ունկընդրել երգը ու միասին կատարել զբոսանքին զուգահեռ:

---

[9] Մանուկյան Մ. Մ., Արտադասարանական դաստիարակչական աշխատանքի առանձնահատկությունները, Ե., «Լույս», 1980, էջ 25

Գեղագիտական դաստիարակությունը մեկ օրվա կամ մեկ առարկայի շրջանակներում դասավանդվող արժեքներից չէ, անշուշտ: Ուստի, անհրաժեշտ է այն կաթիլ-կաթիլ տալ երեխային: Գեղեցիկ դասը ինքնին կարող է գեղագիտական հաճույք պատճառել և՝ ուսուցչի, և՝ սովորողների մոտ:

Երկրորդ դասարանի մայրենիի դասընթացում բազմաթիվ բանաստեղծություններ կան, որոնք երգի են վերածվել: Օրինակ՝ «Աշնան նկար» բանաստեղծությունը կարելի է անցնել միջառարկայական կապեր ստեղծելով «Երաժշտություն» առարկայի հետ և դասը ներկայացնել երգելով: Երաժշտության ազդեցությամբ նյութի յուրացումը անասելի արդյունավետ է դառնում, քանի որ ստեղծվում է զգացմունքային տրամադրվածության անկաշկանդ հոգեբանական մթնոլորտ, ուր գործի են դրվում երեխաների զգայարանները: Ուստի Շոպենի մասին դասանյութը կամ ձյուների թագավորություն թեման դժվար է պատկերացնել առանց համապատասխան երաժշտություն ունկնդրելու:

Միջառարկայական կապերով դասավանդում՝ որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Միջառարկայական նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով[10]:

Միջառարկայական ինտեգրումը իրնից ներկայացնում է տարբեր ուսումնական առարկաների և ծրագրերի փոխադարձ համաձայնեցման գործընթաց՝ մասնագիտական և ուսումնական գործունեության միասնական, անդադար և ամբողջական զարգացման նպատակով:

Ինչպես նշվում է միջազգային բակալավրիատի ծրագրում «Ուսանողները, որոնք կզգան ու կուսումնասիրեն արտաքին աշխարհից եկող

[10] Полат Е. С. , Бухаркина М. Ю., Моисеева М. В., Петров А. Е., Новые педагогические и информационные технологии в системе образования, Учебное пособие / под ред. Е. С. Полат, М.: «Академия», 1999, с. 36

մարտահրավերները, իրենց պարտավորված կզգան արձագանքել այդ մարտահրավերներին, երբ բախվեն դրանց հետ»:

Ֆրեյրը մեզ զգուշացնում է, որ «չեզոք կրթական գործընթաց գոյություն չունի՝ դա բերում է կամ համաձայնության, կամ մասնակցության աշխարհի փոխակերպմանը»: Եվ համապատասխանաբար, մեզ կոչ է անում «ստեղծել ավելի լավ և խաղաղ աշխարհ»[11]:

[11] https://www.ibo.org/ , հասանելի է:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում է դրվում աշակերտների գեղագիտական դաստիարակության դաստիարակության հիմքը: Այդ դասարաններում են ձևավորվում և զարգանում սովորողների երաժշտական ընդունակությունները, կարողությունները, հմտությունները և արժեքային համակարգը, ինչպես նաև երաժշտական արվեստի և կյանքի նկատմամբ սովորողների զգայական, գեղագիտական և ճանաչողական վերաբերմունքը:

Հանրակրթական դպրոցի սովորողների՝ երաժշտության ուսուցման և դաստիարակության աշխատանքներում շեշտը դրվում է դաստիարակչական կողմի, երաժշտության հուզական և ակտիվ ընկալման վրա:

Ընտրված նյութը պետք է լինի գեղարվեստորեն բարձրարժեք, հետաքրքիր, մանկավարժական որոշակի նպատակաուղղվածությամբ, համապատասխանի աշակերտի տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկություն-ներին, հետաքրքրություններին, կատարողական հնարավորություններին և առաջին հերթին ուղղված լինի գեղեցիկը ընկալելու կարողության ներդրմանը:

Ցանկացած նյութի ըմբռնում ավելի հեշտ է պրակտիկ միջավայրում, բացառություն չէ նաև գեղագիտական դաստիրակությունը: Ուստի աշակերտների հետ բնությանը մոտ գտնվելը, դասը կանոններից ու դպրոցական լարված մտնոլորտից դուրս փոխադրելը, կարծում ենք լավագույն եղանակն է աշակերտների մեջ գեղագիտական արժեքներ սերմանելու համար:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Մանուկյան Մ. Մ., Արտադասարանական դաստիարակչական աշխատանքի առանձնահատկությունները, Ե., «Լույս», 1980:
2. Պետրովսկի Ա. Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ե., 1977:
3. Ռուխկյան Վ. Ռ., Արվեստ-մարդ հաղորդակցման գեղարվեստամանկավարժական պայմանները, Ե., 2005:
4. Ուշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, Ե., 1959:
5. Гончаров И. Ф. Действительность и искусство в эстетическом воспитании школьников, М., 1978.
6. Полат Е. С. , Бухаркина М. Ю., Моисеева М. В., Петров А. Е., Новые педагогические и информационные технологии в системе образования, Учебное пособие / под ред. Е. С. Полат, М.: «Академия», 1999.
7. Ушинский К.Д., Материалы к третьему тому "Педагогической антропологии", Собр.соч, т.10, М., 1980.